Շախմատային Հայաստան

№17 (440)

ՄԱՅԻՍ, 2001

ՀԱՅ ՇԱԽՄԱՏԻՍՏՆԵՐԻ ՀԱՂԹԱՐՇԱՎԸ ԴՈՒԲԱՅՈՒՄ

Կարեն Ասրյանը նվաճեց գլխավոր մրցանակը՝ շեյխի մեծ գավաթը

Արտաշես Մինասյանին շնորհվեց երրորդ մրցանակը՝ շեյխի գավաթը

ՇԱԽՄԱՏԱՍԵՐ ԲԱՐԵԿԱՄ

Հայ գրոսմայստերների փայլուն հաղթանակով ավարտվեց Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքում անցկացված 3-րդ Օփենը, որը «Շեյխի գավաթ» անունն էր կրում: Կարեն Ասրյանը ճանաչվեց մրցաշարի հաղթող եւ ստացավ գլխավոր մրցանակը՝ Շեյխ Ռաշիդ Բեն Համդան Ալ Մագդամի սահմանած մեծ գավաթը: Արտաշես Մինասյանին շնորհվեց երրորդ մրցանակը՝ շեյխի սահմանած մեկ այլ գավաթ:

Դուբայի ավանդական դարձած մրցաշարը այս տարի շատ ուժեղ կազմ էր հավաքել: Հիշեցնենք, որ մասնակիցների մեջ էին 33 գրոսմայստերներ, 25 միջազգային եւ ՖԻԴԵ-ի վարպետներ: Բնական է, որ ծավալվել էր շատ համառ պայքար, եւ միանգամից ութ մասնակիցներ հավասար միավորներով բաժանեցին առաջին տեղը: Դրամական պարգեւները նրանց միջեւ բաժանվեցին հավասարապես, իսկ շեյխի սահմանած երեք գավաթների տերերին որոշելու համար կազմակերպիչները դիմեցին լրացուցիչ ցուցանիշներին: Կարեն Ասրյանը, որը աղյուսակը գլխավորողների մեջ էր մեկնարկային տուրից մինչեւ վերջինը, ճանաչվեց մրցաշարի հաղթող եւ ստացավ գլխավոր գավաթը: Արտաշես Մինասյանը, որպես երրորդ մրցանակակիր, արժանացավ մեկ այլ, չափերով համեմատաբար փոքր, բայց նույնպես գեղեցիկ գավաթի:

Ի դեպ, հետաքրքիր է, որ Ինտերնետ համակարգչային ցանցով շախմատային համարյա բոլոր հանրահայտ էջերը թյուրիմացաբար տարածել են, որ երկրորդ եւ երրորդ պարգեւներին արժանացել են Յաան Էլվեստը եւ Ալեքսեյ Ալեքսանդրովը (Արտաշես Մինասյանը նշվում էր որպես չորրորդը): Իրականում մրցանակային տեղեր գրավել են Ալեքսանդր Մոտիլյովը եւ Մինասյանը, եւ մեր երկու շախմատիստները Երեւան են վերադարձել գավաթներով:

Կարեն Ասրյանը եւ Արտաշես Մինասյանը իրենց նվաճած գավաթներով:

Արժե նկատել, որ թեեւ Դուբայի մրցաշարերը ընդամենը երեք տարվա պատմություն ունեն, բայց հայ գրոսմայստերները իրենց նվաճած շեյխի գավաթներով արդեն կարող են մի ամբողջ հավաքածու կազմել: Հիշեցնենք, որ 1999-ին անցկացված 1-ին Դուբայ-Օփենում հաղթեց Վլադիմիր Հակոբյանը, իսկ Աշոտ Անաստասյանը երրորդն էր: Անցյալ տարի Հակոբյանը բաժանեց երկրորդ տեղը (լրացուցիչ ցուցանիշներով ճանաչվեց երրորդը), իսկ ահա այժմ էլ իրենց ընկերների նվաճումները շարունակեցին Ասրյանը եւ Մինասյանը:

Ավելացնենք, որ եւ Կարենը եւ Արտաշեսը ամբողջ մրցատարածությունը անցկացրին առանց պարտության եւ, ըստ նախնական հաշվարկների, մոտ 15-ական կետով բարձրացրին իրենց անհատական վարկանիշները:

Փոքր-ինչ ավելի համեստ էր Դուբայի մրցաշարում մեր երրորդ ներկայացուցչի՝ Աշոտ Անաստասյանի արդյունքը:

Դուբայում Ասրյանի եւ Մինասյանի, մինչ այդ երեք անընդմեջ մրցաշարերում Հակոբյանի հաղթանակները, Ռաֆայել Վահանյանի եւ Լեւոն Արոնյանի վստահ ելույթները տարբեր մրցաշարերում առավել եւս ուրախացնում են, քանի որ մի քանի շաբաթ հետո մեր լավագույն շախմատիստները պետք է հանդես գան կարեւորագույն նշանակություն ունեցող Եվրոպայի անհատական առաջնությունում: Հուսանք, որ հայ գրոսմայստերները կպահպանեն իրենց գերազանց մարզավիճակը մինչեւ Օհրիդի եվրոպական առաջնությունը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Արտ. ՄԻՆԱՍՅԱՆ - ԱՍՐՅԱՆ

[A11]

1.♘f3 c6 2.g3 d5 3.♗g2 ♗g4 4.c4 e6 5.cd5 ed5 6.d3 ♘d7 7.♘bd2 ♗d6 8.h3 ♗h5 9.0–0 ♘e7 10.b3 0–0 11.♗b2 ♕a5 12.a3 ♕b6 13.♔h1 ♖fe8

½–½

«ՇԵՅԽԻ ԳԱՎԱԹ» 3-ՐԴ ՕՓԵՆ
Դուբայ (ԱՄԷ)
Ապրիլ, 2001 թ.

Շվեյցարական մրցակարգ, 9 տուր

1.	Կ. Ասրյան	6,5
2.	Ա. Մոտիլյով	6,5
3.	Ա. Մինասյան	6,5
4.	Յ. Էլվեստ	6,5
5.	Ա. Ալեքսանդրով	6,5
6.	Ե. Վլադիմիրով	6,5
7.	Պ. Կոցուր	6,5
8.	Ե. Երմենկով	6,5
9.	Ա. Շարիազդանով	6
10.	Ա. Ֆյոդորով	6
11.	Մ. Կոբալիա	6
12.	Ե. Պիգուսով	6
13.	Զ. Ստուրուա	6
14.	Մ. Սորոկին	6
15.	Հ. Օդեեւ	6
16.	Օ. Անանագելդիեւ	6
17.	Ա. Վոլժին	6
18.	Դ. Պավասովիչ	5,5
19.	Ա. Կունտե	5,5
20.	Ե. Սվեշնիկով	5,5
21.	Դ. Շերմեկ	5,5
22.	Ա. Խարլով	5,5
23.	Շ. Սաֆին	5,5
24.	Ա. Գալկին	5,5
25.	Ա. Կուզմին	5,5
26.	Վ. Ֆիլիպով	5,5
27.	Թ. Վախիդով	5,5
28.	Ե. Մահերամով	5,5
29.	Մ. Ալ Մոդիակի	5,5
30.	Ա. Անաստասյան	5
31.	Ի. Գլեկ	5
32.	Վ. Նեւերով	5
33.	Յ. Յակովիչ	5
34.	Գ. Դիզդար	5
35.	Ֆ. Էլ Թահեր	5

Ընդամենը՝ 100 մասնակից

ԿՐԱՄՆԻԿԸ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՆԵՑ ԿԱՍՊԱՐՈՎԻՆ

Ցյուրիխում անցկացվեց արագ շախմատի մրցաշար, որը նվիրված էր այժմ Շվեյցարիայում ապրող Վիկտոր Կորչնոյի ծննդյան 70-ամյակին:

Մրցաշարի կազմը բավականին հետաքրքիր էր: Հոբելյարից բացի մեկնարկել էին նաեւ Բորիս Սպասսկին, Պյոտր Սվիդլերը, Նայջել Շորտը, Երուն Պիկետը, Վոլֆգանգ Ունցիկերը, շվեյցարացի շախմատիստներ Յանիկ Պելետիերը, Վերներ Հուգը, Ֆլորիան Ժեննին, Ռիչարդ Ֆորստերը եւ, որ ամենակարեւորն է, Գարրի Կասպարովը եւ Վլադիմիր Կրամնիկը:

Նախնական մրցումներում Կասպարովը (5 հնարավորից 4,5 միավոր) եւ Կրամնիկը (3,5 միավոր) առաջին տեղերը գրավեցին իրենց ենթախմբերում: Հաջորդ օրը պայքարը շարունակվեց «նոկաուտ» համակարգով: Ինչպես եւ պետք էր սպասել, երկու «Կ»-երը հանդիպեցին եզրափակիչում: Մինչ այդ միկրոմրցախաղերում Կասպարովը հաղթեց Կորչնոյին եւ Շորտին, իսկ Կրամնիկը՝ Ունցիկերին եւ Պիկետին: Իսկ վճռական մենամարտում, ինչպես արդեն նշեցինք, հաջողությունն ուղեկցեց Կրամնիկին, որը հաղթեց 1,5:0,5 հաշվով:

ԿԱՍՊԱՐՈՎ - ԿՐԱՄՆԻԿ
1-ին պարտիա

[C67]

1.e4 e5 2.♘f3 ♘c6 3.♗b5 ♘f6 4.0–0 ♘e4 5.d4 ♘d6 6.♗c6 dc6 7.de5 ♘f5 8.♕d8 ♔d8 9.♘c3 ♗d7 10.♖d1 ♔c8 11.♘g5 ♗e8 12.♘ge4 b6 13.h3 ♔b7 14.g4 ♘e7 15.♗f4

15...h5 16.f3 c5 17.♔f2 ♘c6 18.♘d5 ♘d4 19.c3 ♘e6 20.♗g3 ♗c6 21.♖d2 hg4 22.hg4 c4 23.♔g2 ♖d8 24.♖ad1 ♗a4 25.♖e1 ♗c6 26.♖ed1 ♗a4 27.♖e1 ♗c6 ½–½

ԿՐԱՄՆԻԿ - ԿԱՍՊԱՐՈՎ
2-րդ պարտիա

[D48]

1.d4 ♘f6 2.c4 e6 3.♘f3 d5 4.♘c3 dc4 5.e3 a6 6.♗c4 b5 7.♗d3 c5 8.a4 b4 9.♘e4 ♘bd7 10.♘f6 ♘f6 11.0–0 ♗b7 12.dc5 ♗c5 13.♕e2 ♕d5 14.♖d1 ♕h5 15.h3 ♖d8 16.♘d4 ♕d5 17.♘f3 ♔e7 18.e4 ♘e4 19.♗e3 ♗e3 20.♕e3 ♕c5 21.♕e1 ♘f6 22.♖ac1 ♕b6 23.♘e5 ♖d4

24.♗a6 ♖d1 25.♖d1 ♗a6 26.♕b4 ♕b4 27.♘c6 ♔f8 28.♖d8 ♘e8 29.♘b4 ♗e2 30.f3 h5 31.b3 ♖h6 32.♔f2 ♖g6 33.♔e2 ♖g2 34.♔d3 ♖g3 35.a5 ♖f3 36.♔c4 1–0

ԱՅՍՊԵՍ ՉԵՊՄԵՆԸ ՀԱՂԹԵՑ ԿԱՍՊԱՐՈՎԻՆ...

Մեր պարբերականի նախորդ համարում մենք պատմել ենք Կասպարով-Չեպմեն յուրօրինակ մրցախաղի մասին եւ զետեղել ենք Կասպարովի շահած 1-ին եւ 4-րդ (ոչ 3-րդ, ինչպես նշված էր տպաքանակի մի մասում) պարտիաները:

Իսկ այժմ տեսեք, թե ինչպես արդեն անգլիացի մեծահարուստ գործարարին հաջողվեց պարտության մատնել աշխարհի 13-րդ չեմպիոնին:

ՎԱՆ ԱՐՅԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ ՍՊԸ
Հրատարակչական
տպագրական ծառայությունների
ողջ համալիրը
ԱԲԱԳ, ՈՐԱԿՈՎ, ՄԱՏՉԵԼԻ
ԵՐԵՎԱՆ, ԿՈՄԻՏԱՍ 49/2, ՀԵՌ. 23-66-84

ՉԵՊՄԵՆ - ԿԱՍՊԱՐՈՎ
3-րդ պարտիա

1.e4 ♗b7 2.d3 e6 3.♘f3 d6 4.g3 g6 5.♗g2 ♗g7 6.0–0 ♘e7 7.♘c3 0–0 8.♗e3 h6 9.h4 ♘d7 10.♕d2 ♔h7 11.♖fe1 ♕c8 12.a4 f5 13.♘d4 ♘f6 14.ef5 ♗g2 15.fg6 ♘g6 16.♔g2 c5 17.♘de2 d5 18.h5 ♘e5 19.d4 ♘eg4 20.♕d3 ♔g8 21.♕g6 e5 22.♗h6 ♘h6 23.de5 ♘d7 24.♘f4 ♖f4 25.gf4 ♘f8 26.♕g3 ♘f5 27.♕h3 ♕e6 28.♘b5 ♖d8 29.a5 ♕f7 30.a6 ♘e6 31.♔g1 ♘f4 32.♕g4 ♘h6 33.♕h4 ♔h7 34.a7 ♖g8 35.a8♕ ♗e5 36.♔f1 ♖g4 37.♕g4 1–0